ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան 19.03.2024թ.

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) արտահերթ նիստը չկայացավ՝ քվորում չլինելու պատճառով:

Մասնակցել են՝

Ա. Ավանեսյան	- ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ)
Ա. Դանիելյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Հ. Լիլոզյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա Թրպանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետի գիտաշխատող
Ս. Սարգսյան	- ԱԱՏՄ ղեկավար
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ջումայան	- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Ա. Մուրադյան	- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Գրիգորյան	- ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար
Վ. Ալեքսանյան	- ՀՀ առողջապահության նախարարության լիցենզավորման գործակալության պետ
Ժ. Խառատյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի Համակարգման և մեթոդաբանության վարչության պետ
Գ. Հովհաննիսյան	- ԱԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (Խորհրդի քարտուղար)
Լ. Նալբանդյան	- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն

Չեն մասնակցել՝

Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Լ. Բալյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար

Օրակարգում ընդգրկված հարցերը որոշվեց քննարկել աշխատանքային կարգով, որի արդյունքում.

1. ներկայացվեցին խմելու ջրի որակի, ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման նվազեցմանը, ինչպես նաև՝ դեղերի շրջանառության ոլորտին առնչվող խնդիրները,

2. որոշվեց բարձրացված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով ապահովել գերատեսչությունների միջև ակտիվ գործակցությունը և խոչընդոտների շուրջ հետադարձ կապի ապահովումը,

3. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Ս. Սարգսյանին ՀՀ առողջապահության նախարարության հետ քննարկել՝

1) ծխախոտի արգելքների պահանջների նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինների միջև կրկնվող գործառույթները,

2) հեռուստատեսությամբ հեռարձակվող սերիալներում ցուցադրվող ծխախոտի օգտագործման արգելքների պահանջները պարզելու նպատակով իրականացված միջոցառումները,

3) Ջրաղբյուրների վերահսկողության արդյունքում արձանագրված խնդիրները,

4. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Վ. Գրիգորյանին՝

1) ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացնել աշխատանքային քննարկում բարձրացված բոլոր հարցերի (այդ թվում՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից նախկինում ներկայացված գրությամբ բարձրացված հարցերի) և մասնավոր դեպքերի վերաբերյալ, և ներկայացնել ամփոփ զեկուցագիր առկա խնդիրների մասին,

2) քննարկել առաջարկություններն, առարկությունները և ներկայացնել քաղաքականության մշակմանն ուղղված համապատասխան փոփոխությունների առաջարկներ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ